ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Թեհրան (Իրանի Իսլամական Հանրապետություն), 2018թ. սեպտեմբերի 1-3-ը

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Էներգետիկայի բնագավառում հայ-իրանական համատեղ ծրագրերի իրականացման ընթացքի քննարկում:

   Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 15-րդ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը վերահսկող հանձնախմբի նիստի անցկացում (հանձնախումբ):

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Հայաստան-Իրան 400 կՎ էլեկտրահաղորդման 3-րդ գծի կառուցման ծրագիր, Մեղրի ՀԷԿ-ի կառուցման ծրագիր, հանձնախմբի նիստի հարցեր:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպում է տեղի ունեցել ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Հ. Հայերիի հետ: Քննարկվել է Հայաստան-Իրան 400 կՎ էլեկտրահաղորդման 3-րդ գծի կառուցման ընթացքը: Կայացել է հանդիպում Հայաստան-Իրան 400 կՎ էլեկտրահաղորդման 3-րդ գծի ծրագրի գլխավոր կապալառու «Սանիր» ընկերության գործադիր տնօրեն Հ. Սալեհիի հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել այց էլեկտրահաղորդման 3-րդ գծի կառուցման տեղանք, դիտարկելու շինաշխատանքների ընթացքը և կարգավորելու

ընթացիկ խնդիրները: Կարևորվել է ծրագիրը սահմանված ժամկետում ավարտելու անհրաժեշտությունը:

ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Հ. Հայերիի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են նաև Մեղրի ՀԷԿ-ի կառուցման ծրագրի իրականացման հետ կապված հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել տասնօրյա ժամկետում ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝ Մեղրի ՀԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի վաճառքի սակագնի գնագոյացման հետ կապված հարցերը՝ հնարավոր ներդրողներին ծրագրի իրականացման համար գրավիչ սակագին առաջարկելու նպատակով:

Այցի շրջանակներում կայացել է նաև Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 15-րդ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը վերահսկող հանձնախմբի նիստը:

7. <u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>

Նախապատրաստվել է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 15-րդ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը վերահսկող հանձնախմբի նիստի արձանագրության նախագիծ, որը կստորագրվի կողմերի ներկայացուցիչների կողմից:

8. <u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>

Շարունակել աշխատանքներն իրանական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման նպատակով:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ **Հ. Վարդանյան**

04.09.2018թ.